

10 000/3

Հրովարտեց իսկ յերկրմեծի, միացն'ս

ՎԵՐՇԿՈՎ

31

ՀԱՄԼԿՅԵՄ
ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅԱՆ
Մ Ա Ս Ի Ն

ЗКМ

4-53

ՍՅԿԱՒՍՀՐԱՑ ● ՕՆՐԵՎԱՆ

1 9 3 6

09 AUG 2013

10000/3

34CM

4-53

այր.

24 SEP 2006

Պրովետարները ընտրվել են ըստ միացման

09 DEC 2000

Վ Ե Ր Շ Կ Ո Վ

ՀԱՄԼ ԿՅԵՄ

ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

11-13
22-23

13824-57
1448

4123
5023



1936

Ընկերներ:

ՀամԼԿՅՆՄ նոր կանոնադրության նախագիծը, վոր առաջարկվում է ներկա համադրումարին Կենտրոնական կոմիտեյի անունից, բավականաչափ տարբերվում է միության IX համադրումարի կողմից փոփոխած և լրացրած նախկին կանոնադրությունից: Յեւ սա միանգամայն հասկանալի չէ, վորովհետեւ փոփոխվել է իրադրությունը, փոփոխվել են պայմանները, վորոնց մեջ աշխատում է կոմյերիտմիությունը: ՀամԼԿՅՆՄ առջև ծառացել են նոր, եւ՛լ ավելի կարեւոր ու ե՛լ ավելի բարդ խնդիրներ, քան առաջ: Սրա հետեւանքով կոմյերիտմիության նախկին կանոնադրությունը հնացել է, կորցրել է իր նշանակությունը: ՀամԼԿՅՆՄ կյանքն ընթանում է այս հնացած կանոնադրության կողքով: ՀամԼԿՅՆՄ գերաճել է իր հին կանոնադրությունից:

Իսկապես, ընկերներ, ի՞նչ եր պահանջում հին կանոնադրությունը կոմյերիտական կազմակերպություններից, կոմյերիտականներից: Գլխավորապես՝ մասնակցել ժողովրդական տնտեսության սոցիալիստական վերակառուցմանը, յերկրի ինդուստրացման պայքար-

որին: Գյուղի կոմյերիտականներից կանոնադրութ-
թյունը սահանջում էր լինել գյուղատնտեսության սո-
ցիալիստական վերակառուցման ակտիվ մասնակիցներ,
սամեն կերպ ողնել կուսակցությանը կուլակությունն
իրեն դասակարգ վերացնելու խնդրի լուծման մեջ՝ հա-
մատարած կոլեկտիվացման հիման վրա: 1931 թ.
ակդերին, յերբ տեղի ունեցավ միության IX համագու-
մարը, այս բանը ճիշտ էր, անհրաժեշտ, հրատապ: Իսկ
այժմ — սա բոլորին հայտնի յե — մեր յերկրում ար-
դեն ստեղծված է հզոր արդյունաբերության՝ հազե-
ցած առաջնակարգ տեխնիկայով, գյուղում վերջնակա-
նապես հաղթանակել է կոլտնտեսային հասարակակա-
րը, կուլակությունը վորպես դասակարգ ջախջախված,
վերացված է, յերկրի ժողովրդական տնտեսությունը
դարձել է սոցիալիստական:

ՀամԼԿՅԵՄ IX համագումարից մի քանի ուր հետո,
1931 թ. փետրվարի 4-ին, ընկեր Ստալինը, հանգես
գալով սոցիալիստական արդյունաբերության աշխա-
տողների կոնֆերենցիայում, ասաց.

«Առաջավոր յերկիրներից մենք հետ ենք մնացել
50—100 տարով: Մենք պետք է այս տարածու-
թյունը կտրենք—անցնենք 10 տարում: Կամ մենք
այս բանը կանենք, կամ մեզ կճգմեն» (Ստալին,
«Լենինի ճգնաժամի հարցերը», հայ. էջ 554):

Յեվ ահա, 5 տարի անց, այսօր մենք կարող ենք ա-
ռանց հպարտանալու ասել, վոր այժմ մեզ չեն ճգմի,
վորովհետև մեր յերկիրն այնքան է աճել ու ամրացել,

վոր մենք ջախջախիչ հակահարված կարող ենք տալ
թշնամու՝ մեզ վրա հարձակվելու ամեն մի փորձին:

Կարելի՞ յե, արդյոք, այժմ, նոր պայմաններում,
նախկին պահանջներն առաջադրել կոմյերիտականին:
Իհարկե, վոչ: Նոր կանոնադրությունն՝ ի տարբերու-
թյուն նախկինի, կոմյերիտական կազմակերպություն-
ներից, կոմյերիտականներից սահանջում է ձեռք բե-
րել գիտելիքներ, գիտություն, կուլտուրա, համա-
կերպով սովորել, հաստատապես և սխտեմատիկ ու-
սումնասիրել մարքսիզմ-լենինիզմը: Կոմյերիտմիութ-
յունն այժմ կոչված է լինելու համակողմանի ուսուց-
ման կազմակերպություն, ամբողջ խորհրդային յերի-
տասարդության կոմունիստական դաստիարակության
կազմակերպություն:

Բոլշևիկյան կուսակցության փորձը սովորեցնում է
կոմյերիտմիությանը փոփոխելու իր աշխատանքի կազ-
մակերպական ձևերը, փոփոխելու իր կազմակերպական
քաղաքականությունն աշխատանքի նոր պայմանների
համեմատ: Վերջերք, որինակ, կոմյերիտմիության մեջ
ընդունելու հարցը: Նախկին կանոնադրության մեջ աս-
ված է.

«ՀամԼԿՅԵՄ անդամ ընդունվում են՝ բանվոր,
բատրակ, կոլտնտեսական, շքավոր ու ժիջակ յերի-
տասարդությունն առանց թեկնածուական ստաժի
և յերաշխաժորությունների»:

Առանց թեկնածուական ստաժի ու յերաշխաժորու-
թյունների կոմյերիտմիության անդամ էլին ընդուն-

վում նմանապես պրոլետարական, բատրակային և չքավորական ընտանիքից յեւածները — մասնագետներ, աշակերտներ, դպրական ուսուցիչներ և դպրոցատնտեսներ: Մասաչուսեթսը և յնտելիգենտները կոմյերիտմիութեան մեջ ընդունվում եյին մեկուկեսամյա թեկնածուական ստաժով: Սոցիալական այս կամ այն խմբին պատկանելը համարյա թե վճռական հատկանիշ էր կոմյերիտմիութեան մեջ ընդունելիս: Այն ժամանակ սա անհրաժեշտ էր: Ի միջի այլոց, սրանով և՛ դիտավորապես վճռվում կոմյերիտմիութեան պրոլետարական ղեկավարութեան հարցը: Իսկ այժմ, սա բոլորին հայտնի յե, այսպիսի մոտեցումն արդէն անպետք է: ՀամԼԿՅԵՄ Կենտկոմը շատ վաղուց է այս վերաքննել ու վերացրել: Հո ջեր կարելի ձևական նկատառումներով առաջնորդվել այն բանով, ինչ հնարած է, դարձել է անընդունելի, նշանակում է՝ նաև յնաստակար:

Մենք կոմյերիտմիութեան մեջ ընդունում եյինք 14—23 տարեկան հասակի յերիտասարդութեանը: Ինքը կյանքն ուղղեց մեզ: Այժմ հակառակ նախկին կանոնադրութեան սահմանափակումների, կոմյերիտմիութեան մեջ յերիտասարդութեան 30%-ը 23 տարեկանից բարձր է: Կոմյերիտմիութեանը բառիս ուղղակի իմաստով դարձել է մեծահասակ: Բնական է, վոր նախկին հասակային շրջանակները նեղ են դարձել, քանի վոր նրանք սահմանափակում եյին

հասակաւոր յերիտասարդութեան բավականաչափ խափերի մոտքը կոմյերիտմիութեան:

Նախկին կանոնադրութեանը սխալ էր մեկնաբանում պիոներական կազմակերպութեան դերը, հաստատելով, վոր

«յուրաքանչյուր կոմյերիտական ոգնում է պիոներներին մասնակցելու սոցիալիստական շինարարութեանը»:

Իհարկէ, կանոնադրութեան այս դրույթը հակասում էր յերեխաների կոմունիստական դաստիարակութեան, գիտելիքների հիմունքներին տիրապետելու, յերեխաների հանդիստը կազմակերպելու և այլ խնդիրներին: Յերեխաների դաստիարակութեան խնդիրների վերաբերմամբ սխալ հայացքը ժամանակին բնորոշ էր կոմյերիտական և պիոներական աշխատողների վորոշ մասի համար:

Կարելի յեր հիշատակել կանոնադրութեան նաև այլ հնարած, ժամանակն անցրած և նույնիսկ վոչ-գիտական ձևակերպումներ: Ահա թե ինչի հետևանք է ՀամԼԿՅԵՄ նոր կանոնադրութեան հարցադրումը ներկա համադրմամբ: Կոմյերիտմիութեանն իր պատմութեան ընթացքում իր աճման ու զարգացման դուռնիքաց, նրա առջև կուսակցութեան դրած խնդիրների բավազույն կատարման համար իր կանոնադրութեան մեջ համապատասխան փոփոխութեաններ էր մտցնում՝ հաշվի առնելով փոփոխվող պայմանները: Սակայն այս համագումարում քննարկվող ՀամԼԿՅԵՄ կանոնադրութեանը

հակայական դեպք ե կոմյերիտմիության կյանքում : Համագումարի քննարկմանն ե ներկայացված մի կանոնադրություն, վորի հիմնական դրույթները տվել ե անձամբ ընկեր Ստալինը : (Ծափահարություն) :

Յես չեմ խոսելու ՀամկլԿՅԵՄ նոր կանոնադրության բովանդակության հետ կապված բոլոր հարցերի մասին : Կանգ կառնեմ մի քանի հիմնական հարցերի վրա միայն :

I. ԿՈՄՅԵՐԻՏՄԻՈՒԹՅԱՆ ԵՅՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Կանոնադրության նախագծում ասված ե, վոր կոմյերիտմիությունը խորհրդային առաջավոր յերիտասարդության մասսայական անկուսակցական կազմակերպությունն ե, վոր կոմյերիտմիությունը հարում ե Համկ(բ)Կ-ին, հանդիսանում ե նրա ռեզերվն ու ողնակները : Կոմյերիտմիությունը կոչված ե ոգնելու կուսակցությանը յերիտասարդությանը կոմունիստական վոգով դաստիարակելու գործում : Կոմյերիտմիության եյության ընորոշումը, վոր ձևակերպված ե կանոնադրության նախագծում, տվել ե անձամբ ընկեր Ստալինը : (Ծափահարություն) : Կանոնադրության նախագծի սկզբնական տեքստում մենք, ՀամկԿՅԵՄ Կենտկոմը, առաջարկում եյինք գրել այսպես .

«ՀամկԿՅԵՄ հանդիսանում ե Համամիութենական կոմունիստական (բոլշեխիների) կուսակցության ռեզերվն ու հավատարիմ ոգնակները : Բոլշե-

վիկյան կուսակցության դեկավարությամբ ՀամկԿՅԵՄ յերիտասարդությանը դաստիարակում ե կոմունիզմի վոգով, նրան համախմբում ե Համկ(բ)Կ և խորհրդային իշխանության շուրջը : ՀամկԿՅԵՄ մասսայական, իր եյությամբ պրոլետարական, կազմակերպությունն ե, վորն իր շարքերում միավորում ե առաջավոր, դասակարգայնորեն դիտակից, քաղաքականապես դրապետ յերիտասարդության լայն խավերին» :

Ինչպես տեսնում եք, ընկեր Ստալինը լուրջ կերպով ուղղել ե ՀամկԿՅԵՄ կանոնադրության նախագծի այս հիմնական դրույթը : Այս ուղղումները, ինչպես իր հիանալի ճառում միանգամայն ճիշտ նշեց Ա. Ա. Անդրեյեվը, ուղղումներ են հանդիսանում մեր անցյալ, ինչպես և ներկայիս աշխատանքում : Ընկեր Ստալինի դիտողությունները կանոնադրության և ծրագրի նախագծի առթիվ վոչ մի դեպքում չի կարելի անջատել այն ցուցումներից, վոր տվել ե ընկեր Ստալինը 1935 թվի սկզբին Լենինյան կոմյերիտմիությանը յերիտասարդության կոմունիստական դաստիարակության խնդրի վերաբերյալ :

Իր ժամանակին ընկեր Ստալինի ցուցումով մենք ամատապես փոփոխեցինք կոմյերիտմիության կոմիտեների կառուցվածքը, վորոնք մեխանիկորեն ընդլրինակում եյին կուսակցական կոմիտեների կառուցվածքը : Սա բավականաչափ թեթևացնում ե յերիտասարդության դաստիարակության խնդիրների լուծումը :

ՀամԼԿՅՅԵՄ դաստիարակչական աշխատանքն առաջ է գնացել:

Սակայն մի քանի կոմյերիտական կոմիտեներ մինչև այժմ դեռ ելի լրիվ չափով չեն անցել յերիտասարդության դաստիարակման հարցերին, մինչև այժմ նրանց ուղարկությունը գրավում են զանազան խորատես սղանախան հարցեր: Մինչև այժմ մի քանի կոմյերիտական կոմիտեներ շարունակում են շնորհիմակել կուսակցական կազմակերպությունների աշխատանքի մեթոդները: Սա բացատրվում է կոմյերիտական բնույթն ու եյուլթյունը չըմբռնելուց: Ընկեր Ստալինի այն ցուցումը, թե կոմյերիտականն անկուսակցական կազմակերպություն է, պարտավորեցնում է մեզ շատ բան վերաբնել ու փոփոխել կոմյերիտական աշխատանքի պրակտիկայում: Բավական է ուսել, վոր հաճախ կոմյերիտական կազմակերպությունները կոմյերիտականություն մտնողներին առաջադրում են համարյա նույն պահանջները, ինչ ներկայացվում են կուսակցություն մտնելու ժամանակ: Որինակ, Լենինյան կոմյերիտական շարքերը մտնել ցանկացողից յերբեմն պահանջում են իմանալ և լրիվ չափով համաձայն լինել ՀամԿ(բ) ծրագրին ու կանոնադրությանը: Կարծես թե կուսակցության անդամի և կոմյերիտականի միջև վոչ մի տարբերություն չկա, բացի տարիքից: Իհարկե, այս պահանջը սխալ է, նա հակասում է կոմյերիտականության եյուլթյանն, իբրև անկուսակցական կազմակերպության, վոր կոչված է յերիտա-

սարդությանը դաստիարակելու կոմունիզմի վոգով:

Կանոնադրության սկզբնական նախագծում մենք նույնպես առաջ գրել եյինք, թե «վորեւ չեղում ՀամԿ(բ) և ՀամԼԿՅՅԵՄ ծրագրից անհամատեղելի յե կոմյերիտական մեջ գտնվելու հետ»: Ընկեր Ստալինը պարզաբանեց, վոր կոմյերիտական մեջ գտնվելու հետ անհամատեղելիության նշումով հարկավոր է սահմանափակվել միայն այն դեպքում, յերբ կոմյերիտականը չեղվի ՀամԼԿՅՅԵՄ ծրագրից:

Այսպիսով, հասկանալի և ճիշտ կլինի կոմյերիտական մեջ մտնողներին պահանջ առաջադրել իմանալու և համաձայն լինելու ՀամԼԿՅՅԵՄ ծրագրին:

Կանոնադրության սկզբնական նախագծում մենք նմանապես պահանջում եյինք կոմյերիտական թեկնածուից, վոր նա թեկնածուական ստաֆն անցնելու շրջանում անպայման ծանոթանա կուսակցության ծրագրի և կանոնադրության հետ: Ընկեր Ստալինն այս կետը ջնջեց:

Հենց այժմ իմ մեջքերած նախագծի սկզբնական տեքստի դրուլթները տխալը նորից այն է, վոր կոմյերիտական անկուսակցական կազմակերպության անդամներին առաջադրվում եյին նույնպիսի պահանջներ, ինչ և կուսակցության անդամներին: Իհարկե, մեծապես մոլորությունը կլինի այս ամբողջ առածներից յեղրակացնել, վոր մենք չպետք է դաստիարակենք կոմյերիտականներին, ամբողջ յերիտասարդությանը կուսակցության ծրագրին ընդունելու վոգով:

կուսակցութեան վորոշումները հարգելու վոգով: Մեր սրբազան պարտքն է՝ յերիտասարդութեանը կազմակերպել պայքարելու կուսակցութեան ծրագիրը, նրա վորոշումները, նրա լուղանքները կատարելու, այսինքն կուսակցութեան գիծն իրականացնելու համար:

Այսպիսով, չի կարելի թեկուզ և կուսակցութեանը հարող, թեկուզ և իր վոգով կոմունիստական հանգիստացող անկուսակցական կազմակերպութեան կանոնադրութեանը, վորպիսին կոմյերիտմիութեանն է, նույնացնել ՀամԿ(բ)Կ կանոնադրութեան հետ: Դեռևս անհրաժեշտ է աշխատել մեր ակտիվի մեջ, վորպեսզի նա մինչև վերջ գիտակցի կոմյերիտմիութեան ելութեանն ու բնույթը:

Նայեցեք, թե վորքան անհամբերութեամբ են ցուցաբերում կոմյերիտական կազմակերպութեանները, և առանձնապես նրանց շտապկոտ դեկավարներն այն դեպքերում, յերբ կոմյերիտականը վորևէ զանցանք է կատարում: Յերբեմն բավական է ամենաչնչին առիթ, վորպեսզի կոմյերիտականին վտարեն միութեան շարքերից կամ նրան նշավակեն լուրջ տույժով: Բնորոշ է, վոր այս ծայրահեղ անհամբերողութեանը դեպի կոմյերիտմիութեան անդամների ամենաչնչին զանցանքները անդրադարձել են նաև նոր կանոնադրութեան նախագծի առթիվ մտցված առաջարկներում և ուղղումներում: Մի խիստ ընկեր առաջարկում է կանոնադրութեան մեջ գրել.

«Վորևէ պատճառով կուսակցութեանից վտարված

անձինք չպետք է մնան Լենինյան կոմյերիտմիութեան շարքերում»:

Մի ուրիշը կրկնում է նրա առածը.

«Կոմյերիտականը, յեթե կուսակցութեան անդամ է, յերբ նրան վտարում են կուսակցութեանից, չի կարող մնալ ՀամԼԿՅԵՄ շարքերում»:

Այս մարդիկ մեխանիկորեն հավասարութեան նշան են դնում կուսակցութեան անդամի և կոմյերիտմիութեան անդամի միջև: Նրանց առաջարկների միջով անցնում է այն հսկայական տարբերութեան չըմբռնումը, վոր կամ կառավարող կուսակցութեան անդամի և անկուսակցական դատարարական կազմակերպութեան անդամի միջև:

Նախահամադրվածության ընտարկման ժամանակ պարզվեց, վոր ակտիվիստները վորոշ, ճիշտ է, փոքրիկ, մասը մի ինչ-վոր սկզբունքներն նոր բան էր տեսնում: Կանոնադրութեան նախագծում տրված՝ կոմյերիտմիութեան ելութեան բնորոշման մեջ, մի բան, վորն սկզբունքներն տարբեր է կոմյերիտմիութեան վերաբերյալ մեր նախկին պատկերացումից: Սրա հետ վոչ մի կերպ չի կարելի համաձայնել:

Կոմյերիտմիութեան ելութեան այն բնորոշումը, վոր տրված է կանոնադրութեան մեջ, միանգամայն համապատասխանում է այն բանին, ինչ առաջ ասում էյին Լենինն ու Ստալինը յերիտասարդութեան մասին: Լենինն ու Ստալինը մշտապես ընդգծում էյին կոմյե-

րիտմիութեան անկուսակցական դաստիարակչական բնույթը: Սրանում, ընկերներ, հեշտութեամբ կարելի չէ համոզվել, ուշադրութեամբ կարդալով Լենինի և Ստալինի առույթները կոմյերիտմիութեան վերաբերյալ:

Միայն մեր կուսակցութեան թշնամիները, առանձնապես արոցկիստներն եյին բաղմիցս փորձում չորսըորթել յերիտասարդութեանը, սնդեւորով, վոր կոմյերիտմիութեանը համարյա թե «յերիտասարդական կուսակցութեանն է»:

«Ձախիկները» (ինչպես հայանի չէ, նրանցից միքանիսը մի ժամանակ առնչութեան ունեյին մեր միութեան ղեկավարութեան հետ) ուղղակի հայտարարում եյին, թե կոմյերիտմիութեանն անկուսակցական կադմակերպութեանն է: Բաւական է հիշեցնել Խորհրդային մեծ հանրադիտարանում տպագրված և ժամանակին քննադատված «ՀամԼԿՅԵՄ» վոչ-անհայտ հոդվածը: Այս վնասակար հայացքներն, իհարկե, կարողացել են վորոշ չափով թափանցել նաև այն ժամանակվա միութեան ղեկավար փաստաթղթերի մեջ: Այս վերջինքերեւոյիներ ղադտնի, իսկ յերբեմն ել բացահայտ նպատակն է յեղել Լենինյան կոմյերիտմիութեանն հակադրել բոլշևիկյան կուսակցութեանը:

Սակայն այս փորձերից վոչինչ դուրս չեկաւ, վորովհետեւ Լենինյան կոմյերիտմիութեանը յեղել է և մնում է մինչև վերջ հավատարիմ ու նվիրված իր բոլշևիկյան կուսակցութեանը: (Ծափահարութեամբ):

Յեւ այժմ դտնվել են, ճիշտ է, հատուկենտ, ակտիվիստներ, վորոնք սկզբունքորեն սխալ են համարում կոմյերիտմիութեան անկուսակցական բնույթի վերաբերյալ սնդեւոր: Դժվար չէ կոահել, վոր նրանց տեսակետով կոմյերիտմիութեանը մի յուրատեսակ «յերիտասարդ կուսակցութեանն է»:

Այս ընկերների տեսակետը վոչ մի ընդհանուր բան չունի կոմյերիտմիութեան ղերի ու նրա խնդիրների վերաբերյալ Լենինի և Ստալինի ուսմունքի հետ:

Վորպեսզի կոմյերիտմիութեանը կարողանա հաջողութեամբ կատարել ամբողջ խորհրդային յերիտասարդութեան կոմունիստական դաստիարակութեան խնդիրը, նա պետք է լինի յերիտասարդութեան լաճ, մասսայական անկուսակցական կադմակերպութեանը, վորն աշխատում է կուսակցութեան անմեջական ղեկավարութեամբ: Այստեղից պարզ է, վոր կոմյերիտմիութեան, իբրեւ «յերիտասարդ կուսակցութեան» վերաբերյալ պատկերացումը արմատապես հակասում է լենինիզմին, արմատապես հակասում է միութեան հիմնական կոչմանը՝ ոգնել կուսակցութեանը կոմունիստական դաստիարակութեան տալու յերիտասարդութեանն ու յերեկաններին: Յեւ նա, ով կոմյերիտմիութեան մեջ տեսնում է ինչ-վոր «յերիտասարդ կուսակցութեան», անխուսափելիորեն կհանդի կոմյերիտմիութեանը կուսակցութեանը հակադրելուն:

Կոմյերիտմիութեանը հատուկ տեղ է գրավում պուլետարիատի դիկտատուրայի սխտեմում: Ընկեր Ստա-

լինը, ընտրուելով կոմյերիտովության ելուցյունն ու խնդիրները, ասել է, վոր յերիտասարդական միությունը—

«...դա քանիորական է գլուղացիական յերիտասարդության մասսայական կազմակերպությունն է, վոչ—կուսակցական, բայց կուսակցությանը հարող կազմակերպություն: Նրա խնդիրն է՝ ողնել կուսակցությանը յերիտասարդ սերունդը սոցիալիզմի վողով դատարարակելու գործում: Նա յերիտասարդ ղեկավարներ ետալիս պրոլետարիատի մասնացած բոլոր մասսայական կազմակերպություններին՝ կառավարման բոլոր ճյուղերի համար» (Ստալին, «Լենինիզմի հարցերը», հայ. էջ 150):

Դժբախտաբար, վորոչ ակտիվիստներ խորամուխ չեն լինում այս կրասիկ ձևակերպման մեջ, վորը պարտախանում է նրանց համար մութ շատ հարցերի: Իսկ չե՞ վոր հենց այս ձևակերպումից է բղխում, վոր կոմյերիտովությունը կուսակցության ողնակամն է և նրա ղեկավարը: Յե՞վ հենց այստեղից է բղխում, վոր կոմյերիտովությունը համակրում է կուսակցության ճրագրին և պայքարում է նրա լողուններին ու խնդիրներին իրականացման համար: Կոմյերիտովության՝ վորպես մասսայական անկուսակցական կազմակերպության ուժն ու արժեքը հենց այն է, վոր նա հարում է Համ. Կ(բ)Կ-ին, նրա ղեկավարությամբ աշխատում է յերիտասարդության կոմունիստական դատարարակության վրա:

II. ՀԱՄԼԿՅԵՄ ԱՆԴԱՄՆԵՐԻ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Վո՞րն է կոմունիստական դատարարակությունը: Այս հարցին սպառնչ պատասխան է տրված Լենինի և Ստալինի ուսմունքի մեջ: Լենինն ասել է.

«Կոմունիստ կարելի չէ դառնալ միայն այն ժամանակ, յերբ քո հիշողությունը հարստացնես այն բոլոր հարստություններն իմանալով, վոր մշակել է մարդկությունը» (Լենին, Ճառ ՌԿՅԵՄ Համառուսաստանյան III համագումարում, XXV հ., էջ 388):

Այս դեպքում, իհարկե, հարկավոր է նկատի ունենալ, ասում եր Լենինը, վոր

«Սխալ կլիներ այնպես կարծել, վոր բավական է յուրացնել կոմունիստական լողունները, կոմունիստական գիտության յեղրակացությունները, չյուրացնելով գիտելիքների այն գումարը, վորոնց հետեանքն է հանդիսանում ինքը կոմունիզմը» (Լենին, Ճառ ՌԿՅԵՄ Համառուսաստանյան III համագումարում, XXV հ., էջ 386—387):

Յե՞վ այնուհետև.

«Առանց աշխատանքի, առանց պայքարի կոմունիզմի գրքային իմացությունը կոմունիստական բողոշուրներից ու յերկերից՝ ուղղակի վողինչ չարժե, քանի վոր այն կշարունակեր նախկին խզումը թեորիայի ու պրակտիկայի միջև, այն

III
Հին խզումը, վոր կաղմում եր բուրժուական հին
հասարակության ամենանողկալի հատկանիշը» :
(Լեհին, Ճառ ՌԿՅԵՄ Համադրուսատանյան III
համագումարում, XXV հ. եջ 385—386) :

Յենեկով այս դրույթներէց կանոնադրությունը չա-
րադրում է ՀամԼԿՅԵՄ անդամների պարտականու-
թյունները : Հենց այս պատճառով է առաջին պլանի
վրա մղվում կոմյերիտմիութեան անդամի պարտակա-
նությունը՝ տիրապետելու մարքսիստական—լենինյան
ուսմունքին, նրա հիմնական գաղափարներին, տիրա-
պետելու գիտելիքներին, կուլտուրային, գիտութեանը,
տեխնիկային : Բայց սա, իհարկէ, բոլորը չէ : Համ-
ԼԿՅԵՄ անդամները պարտավոր են բոլոր ուժերով
ամրացնել խորհրդային հասարակակարգը, խորհրդա-
յին արդյունաբերութեան ու տրանսպորտը, կուլտու-
րան, տնտեսութեանն ու խորհանտեսութեանները, պայքար
մղեն ժողովրդի թշնամիներէ դեմ : Կոմյերիտմիութեան
անդամը աշխատանքին սոցիալիստականորեն վերաբեր-
վելու որինակ պիտի ցույց տա, արթուն պաշտպանի
սոցիալիստական սեփականութեանը, որինակելի լինի
կենցաղում, պայքարի խուլիգանութեան դեմ, կնոջը
վոչ—ընկերաբար վերաբերվելու դեմ, որինակելի վար-
մունք ցույց տա ընտանիքին, յերեսխաներին, համբե-
րատար կերպով պարգաբանի յերիտասարդութեանը
սնահավատութեան ու կրօնական նախապաշարմունքնե-
րի վնասը :

ՀամԼԿՅԵՄ անդամները պետք է ակտիվորեն մաս-

նակցեն կոմյերիտական կազմակերպութեաններէ աշ-
խատանքին, հաճախեն ժողովներին, քաղաքապ-
մունքներին, արագ ու ճշգրիտ կատարեն կազմակեր-
պութեան առաջադրութեանները :

Կոմյերիտականը սոցմրցութեան ակտիվ մասնակիցն
է : Կոմյերիտական արտադրական աշխատողները պետք
է տիրապետեն աշխատանքի ստախանովյան մեթոդնե-
րին :

Վորոչ ընկերներ վիճարկում են կանոնադրութեան
մեջ շարադրված պարտավորութեանները : Կանգ կառ-
նեմ ընկ. Բորիսովի յեւույթի վրա «Комсомолецкай
Правда»-յում, վորն առաւել մանրամասնութեամբ
վերլուծել է այս հարցը : Ընկ. Բորիսովն իր հոդվա-
ծում ՀամԼԿՅԵՄ անդամների պարտավորութեանների
վերաբերյալ կետը համադրելով կուսակցութեան ան-
դամների պարտավորութեանների վերաբերյալ կուսակ-
ցութեան կանոնադրութեան կետի հետ, գրում է. «Կոմ-
յերիտականին ալեկի մեծ պահանջներ են առաջադր-
վում, քան կուսակցութեան անդամին» : Այսպիսի մե-
խանիկական, —չատ, թե քիչ, —համեմատութեանն ինք-
նին արդեն սխալ է : Ընկ. Բորիսովի արած յեզրակա-
ցութեաններն ըստ ելութեան ել սխալ են :

Կուսակցութեան կանոնադրութեան, որինակ, պար-
տավորեցնում է կուսակցութեան անդամին հետեւել
կուսակցական ամենախիստ կարգապահութեան և ակ-
տիվորեն մասնակցել կուսակցութեան քաղաքական
կյանքին : Նման վոչ մի բան չկա կոմյերիտմիութեան

կանոնադրութեան նախադժուած և, բնականաբար, չի ձարող լինել: Յեւ կամ ՀամԿ(բ)Կ կանոնադրութեան մեջ ասված է, վոր կոմունիստը իբրև խորհրդային պետութեան մեջ կառավարող կուսակցութեան անդամ, պարտավոր է հանդիսանալ աշխատանքային և պետական կարգապահութիւնն սրահպանողի տրինակ: Այսպիսի պահանջ չի ներկայացնում կանոնադրութեանը ՀամԼԿՅԵՄ անդամին և, իհարկէ, չի կարող ներկայացնել: Հետևաբար, ուղղակի անհեթեթութիւնն է խոսել այն մասին, վոր կոմյերիտականն «ամէլի շատ պարտավորութիւններ» ունի:

Սակայն կոմյերիտիութեան անդամի պարտականութիւններին վերաբերող կետի առթիւ ընկ. Բորիսովի և միջանի ուրիշ ընկերների արած միջանի դիտողութիւնների հետ պետք է համաձայնել:

Այսպէս, որինակ, ըստ յերևութին, հարկավոր է ճշգրտել կանոնադրութեան նաև այն մասը, վորտեղ խոսվում է, թե յուրաքանչյուր կոմյերիտական պարտավոր է «աշխատել ստախանովաբար»: Չե՞ վոր ամեն մի կոմյերիտական իր աշխատանքի բնութիւնով չի կարող ստախանովական լինել: Իսկ՝ բացի սրանից, չի կարելի ստիպել կոմյերիտականին պարտադէր կարգով ստախանովական լինելու: Սա բյուրոկրատականորեն է հնչում: Վորտէ ուղղումներ հարկավոր է մտցնել, բայց ընկ. Բորիսովի հիմնական առաջարկի հետ չի կարելի, համաձայնել: Նա առաջարկում է ՀամԼԿՅԵՄ անդամի պարտականութիւնները շարադրել այսպէս.

«ՀամԼԿՅԵՄ անդամը պարտավոր է.

ա) կատարել բոլշևիկների կուսակցութեան և կոմյերիտիութեան վորոշումները և ակտիւ մասնակցել յերկրի քաղաքական կյանքին.

բ) ակտիւ մասնակցել կոմյերիտական կազմակերպութեան աշխատանքին, ճշտապահորեն հաճախել կոմյերիտական ժողովները. արագ և ճշգրիտ կատարել կազմակերպութեան առաջադրութիւնները, ամեն մի սկսած դործ հասցնելով մինչև վերջ»:

Ահա այն բոլորը, ինչ առաջարկվում է ասել ՀամԼԿՅԵՄ անդամի պարտականութիւնների մասին:

Այս առաջարկն, իմ կարծիքով, անընդունելի չէ: Այն չի ընդգրկում ՀամԼԿՅԵՄ անդամի կոնկրետ պարտականութիւններ ժամողջ շրջանը, հակասում է այն բանին, վոր կոմյերիտիութեանը հանդիսանում է առաջավոր, քաղաքականպէս գրագետ յերիտասարդութեանը համախմբող կազմակերպութիւն: Կոմյերիտականն իբրև խորհրդային առաջավոր յերիտասարդ պարտավոր է.

սխտեմատիկ բարձրացնել իր գաղափարական, թերիական մակարդակը.

աշխատել գիտելիքներին, կուլտուրային, գիտութեանը, տեխնիկային.

ուսումնասիրել ռազմական գործը և այլն:

Կանոնադրութեան նախագիծը կոմյերիտիութեան վրա դնում է այս և ուրիշ պարտականութիւններ հոգուտ կոմյերիտիութեան միավորած յերիտասարդու-

Թյան քաղաքական և կուլտուրական աճման, հոգուտ կոմյերիտմիության ե՛լ ավելի մեծ ազդեցության արտամիութենական յերիտասարդության լայն խավերի վրա:

Ահա թե ինչու մենք չենք կարող ընդունել նշված հոգվածի հիմնական առաջարկը և կոմյերիտմիության անդամի պարտականությունները սահմանափակել նրանով, ինչ շարադրված է այնտեղ:

III. ԿՈՄՅԵՐԻՏՄԻՈՒԹՅԱՆ ՄԵՁ ԸՆԴՈՒՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Նոր կանոնադրության նախագիծը սկզբունքորեն նոր ձևով է դնում կոմյերիտմիության մեջ ընդունելու հարցը: Մեզ մոտ առաջ կոմյերիտմիության մեջ ընդունելիս յերիտասարդությունը բաժանում է յինք սոցիալական խմբերի:

Նոր կանոնադրության նախագիծով կոմյերիտմիության՝ անդամ ընդունվում է առաջավոր, ստուգված, խորհրդային իշխանությանը նվիրված յերիտասարդությունը բանվորների, գյուղացիների և ծառայողների միջից: Իսկ այն դեպքում, յերբ ընդունվողը դեռ լուսավանդաչափ պատրաստ չէ ՀամԼԿՅԵՄ անդամ ընդունվելու համար, կադմակերպությունը նրան ընդունում է իր շարքերն իբրև Թեկնածու 6 ամիս ժամանակով:

Կոմյերիտմիության մեջ ընդունելու վերաբերյալ այս

նոր հարցադրումը նմանապես տվել է ընկեր Ստալինը: Կանոնադրության սկզբնական նախագիծում մենք այլ կերպ էյինք նայում կոմյերիտմիության մեջ ընդունելու հարցին, կոմյերիտմիության մեջ ընդունելիս առաջավոր, խորհրդային իշխանությանն ու կուսակցությանը նվիրված առանց բացառության ամբողջ յերիտասարդության համար սահմանելով պարտադիր թեկնածուական ստաժ: Այնուհետև Թեկնածու ընդունվողներին մենք բաժանում էյինք յերկու խմբի. մեկի համար սահմանվում էր 6-ամսյա Թեկնածուական ստաժ, մյուսի համար՝ մի տարվա:

Մեր առաջարկների սխալն ակներև է: Մենք, փոխանակ թեթևացնելու, դժվարացնում էյինք խորհրդային առաջավոր յերիտասարդության մուտքը կոմյերիտմիություն, բոլոր մտնողների համար սահմանելով պարտադիր Թեկնածուական ստաժ: Մենք չէյինք հաշվի առել նաև վորակական տեղաշարժերը ծառայող և սովորող յերիտասարդության մեջ, նրա հոսանքը դեպի կոմյերիտմիություն կարգավորելով ավելի յերկար Թեկնածուական ստաժ մտցնելով: Ընկեր Ստալինը պարզաբանեց մեզ, վոր քանի վոր մենք նախատեսում ենք կոմյերիտմիության մեջ ընդունել առաջավոր յերիտասարդությանը, ապա հարկ չկա նրա համար Թեկնածուական ստաժ սահմանելու:

Յերկրի տնտեսության մեջ, եկոնոմիկայում, դասակարգային կառուցվածքի մեջ, հետևաբար նաև մարդկանց գիտակցության մեջ տեղի յեն ունեցել շատ

լուրջ փոփոխություններ: Մեր խորհրդային յերիտա-
սարդությունը մի կողմ չի կանգնել և չի կանգնած
յերկրի սոցիալիստական վերակառուցման ամբողջ
պայքարից: Ընդհակառակը, նա կուսակցության ղե-
կավարությամբ ակտիվ մասնակցել է և մասնակցում է
սոցիալիստական անդամադարձ հասարակության կա-
ռուցման պայքարին: Այս պայքարի, աշխատանքի և
ուսուցման ընթացքում յերիտասարդությունը դաս-
տիարակվում և կոտլում է, ընդվորում դաստիարա-
կության այս դպրոցը բանվոր և կոլտնտեսական յերի-
տասարդության հետ միասին անցնում են թե՛ յերիտա-
սարդ ծառայողները, թե՛ սովորող յերիտասարդները,
թե՛ յերիտասարդ ինտելիգենցիան:

Բոլորին հայտնի յե, վոր բանվոր յերիտասարդու-
թյունը աճում է բուռն կերպով, ժամ առ ժամ, քա-
ղաքականապես և կուլտուրապես տիրապետում է նոր,
աճող տեխնիկային: Նրա միջից դուրս են յեկել հազա-
րավոր ճարտարագետներ, վարպետ-ստախանովական-
ներ: Կերպարանավորվում է նաև մեր կոլտնտեսա-
կան յերիտասարդությունը, վորն իր մասսայով խո-
րապես ըմբռնում է պրոլետարական պետության չա-
հերը, վորն աճում ու զարգանում է նոր, կոլտնտե-
սային հասարակարգ ստեղծելու պայքարում:

Իսկ նայեցեք ծառայող յերիտասարդությանն ու ա-
ռանձնապես յերիտասարդ ինտելիգենցիային: Վորքա՛ն
նրա մեջ քանչե՛լի, խորհրդային իշխանությանը նփիր-
ված յերիտասարդ ճարտարագետներ կան, որդաչուներ,

դոկտաւտետներ, ուսուցիչներ, բժիշկներ, հաշվա-
պահներ, դերասաններ, յերաժշտագետներ: Ծիշո՛ւ
աղպես ել սովորող յերիտասարդության մեջ, վոր
ծնվել է խորհրդային իշխանության ժամանակ, սովոր-
ում է խորհրդային դպրոցում, քիչ նշանավոր պա-
տանիներ ու աղջիկներ չկան, վորոնք իրոք առաջա-
վոր մարդիկ են և արժանի կոմյերիտմիության շար-
քերում դառնվելու:

Այնինչ չառ կոմիտեներ, փոխանակ ավելի մոտ-
ներգրավելու յերիտասարդ ինտելիգենցիային կոմյե-
րիտմիության աշխատանքին, ղեկավարությանը, լայ-
նորեն ներգրավելու նրան իր շարքերը, այս յերիտա-
սարդությանը թողնում են իր բախտին: Իսկ ինչ ասել
ծառայող յերիտասարդության մասին: Կոմյերիտ-
միության չառ աշխատողներ ամենուրեք արհամար-
հական վերաբերմունք են ցույց տալիս նրան, հաճախ
անտեսում են նրան և յերբեմն խոչընդոտ հանդիսա-
նում նրան կոմյերիտմիության մեջ մտնելու: Սա-
հեռեանք է այն բանը չըմբռնելու, թե վորքան փո-
փոխվել են չորձակա պայմանները, վորքան փոփոխվել
է ինքը ծննդայող յերիտասարդությունը: Յերիտասարդ
ծառայողները խորհրդային յերիտասարդության մի-
մասն են: Նրանք մնացած ամբողջ աշխատավոր յերի-
տասարդության հետ միասին պետք է վայելեն կոմյե-
րիտական ղեկավարության ուշադրությունն ու հոգա-
տարությունը:

Ահա թե ինչու բոլոր հիմքերը կան կոմյերիտմիու-

թյուն ընդունելիս վերացնելու նախկին բաժանումը սոցիալական խմբերի: Ահա թե ինչու կոմյերիտմիությունը պետք է ամեն կերպ թեթևացնի բանվորների, գյուղացիների և ծառայողների միջից յեղած ամբողջ առաջավոր, խորհրդային իշխանությանը նվիրված յերիտասարդության մուտքն իր շարքերը:

Կանոնադրության նախագիծը քննելու ընթացքում հրապարակ յեկավ կոմյերիտմիության մեջ ընդունելու այս նոր հարցադրման չլմբոնում: Ահալասիկ, որինակ, խորհրդային Հացահատիկային տնտեսության ինստիտուտից մի կոմյերիտական ասում է. «Զի կարելի լայնորեն բացել մեր միության դռները: Մենք մեծ ղզոնություն պետք է ցուցաբերենք և յերիտասարդությանն ընդունենք աշխատես, ինչպես այս մասին ասված է հին կանոնադրության մեջ՝ հաշվի առնելով սոցիալական դրությունը»:

Յեղ կամ ահա կոմյերիտմիության Դոնեցի մարզի Վորոշիլովգրադի քաղկոմի քարտուղար ընկ. Գորբատովի առաջարկը. «Ըստիս հարկավոր է բոլորիս ընդունել՝ ճամսյա թեկնածուական ստաժով, վորովհետև յեթե մենք ընդունենք աշխատես, ինչպես ասված է կանոնադրության նախագիծում, կստացվի, վոր կոլտնտեսականներն ու շատ բանվորներ կընդունվին իբրև թեկնածու, իսկ լավագույն պատրաստված սովորող յերիտասարդներն ու ծառայողներն՝ իսկական անդամներ, — այս հանդամանքը կազմակերպության մեջ կնվազեցնի բանվորական միջնախավը»:

Մի կոմյերիտական առաջարկում է «գյուղացի յերիտասարդության համար թեկնածուական ստաժ հասնանել, վորովհետև նա իր մեծամասնությամբ զարգացման ընդհանուր մակարդակով ավելի ցածր է կանդնած, քան բանվոր յերիտասարդության զարգացման մակարդակն է»:

Այս բոլոր առաջարկներում, չնայած նրանց ձևակերպումը տարբեր է, կա նոր պայմանների ընդհանուր չլմբոնում, յերիտասարդության, այս թվում նաև ծառայող և սովորող յերիտասարդության միջի վորակական նոր տեղաշարժերի թերահաշվառում: Դեռ ավելին՝ այս առաջարկներում յերևում է յերկյուղ այս յերիտասարդությունից:

Իհարկե, հնարավոր են աշխուխի դեպքեր, յերբ առանձին բանվորներ և կոլտնտեսականներ կընդունվեն թեկնածու, իսկ ծառայողներն ու սովորող յերիտասարդներն՝ անդամ, վորչապիով վոր խոսքը վերաբերում է կոմյերիտմիության մեջ իբրև անդամ առաջավոր, ստուգված յերիտասարդությանն ընդունելուն, առանց հաշվի առնելու սոցիալական տարբերությունը: Իայց սրանից վախենալու պատճառ չկա, քանի վոր մեր յերիտասարդությունն այլ է դարձել:

Հիմնավորված չե նմանապես այն պնդումը, թե իբր այժմ վորտնտեսական յերիտասարդության գծով աճումը կարող է դանդաղել: Այս սխալ է: Ակներև է, վոր այս ընկերները չեն ճանաչում ներկայիս գյուղացի յերիտասարդությանը: Նրա մեջ շատերը կան,

վոր արժանի յեն կոմյերիտմիության շարքերն ընդուն-
վելու: Նախցեք, թե վորքան քիչ է ընդգրկել կոմյե-
րիտմիությունը տրակտորիստներին ու կոմբայնա-
վարներին, վորոնց մեջ յերիտասարդությունը ճշող
մեծամասնություն է կազմում: Կոմյերիտմիության
սկզբնական կազմակերպությունները նմանապես չափ
փոքրաթիվ են կոլանտեսություններում: Ընտրովի
տվյալներով, դեռելի 565 սկզբնական կազմակերպու-
թյունից 14% ունեն մինչև 5 անդամ, 38% — 6—10
անդամ, 22% — 11—15 անդամ, 12% — 16—20 անդամ
և միայն 6,5% — 20 անդամից ավելի: 149 հազ. կոլ-
անտեսության մեջ ամենևին չկան կոմյերիտմիութ-
յան սկզբնական կազմակերպություններ: Այնտու-
թյուն է յենթադրել, թե այս կոլանտեսություններում
չկա առաջավոր, ստուգված և խորհրդային իշխանու-
թյանը նվիրված յերիտասարդություն, վորի դժով
կոմյերիտմիությունը կարողանար աճել:

Ընկեր Ստալինն ընդգծեց գյուղում կոմյերիտ-
միության աճումն ուժեղացնելու անհրաժեշտություն-
ընդ առաջավոր, ստուգված, խորհրդային իշխանու-
թյանը նվիրված յերիտասարդության գծով: Նա մեր
ուշադրությունը հրավիրեց այն բանի վրա, վոր գյու-
ղում չափ արժանավոր յերիտասարդություն է բաղ-
խում կոմյերիտմիության դռները և վոր նրան հար-
կավոր է ընդունել մեք շարքերը:

Իհարկե, յերբ մենք խոսում ենք առաջավոր յերի-
տասարդությանը կոմյերիտմիության մեջ ընդունելու

մասին, մենք չենք կարող ընդունվողին պահանջ առա-
ջադրել վոր նա յոթնամյակից պակաս կրթություն
չունենա, ինչպես առաջարկում էլին միջանի չափից
գուրա ջանադիր ընկերներ: Անընդունելի յե նմանա-
պես այն առաջարկը, վոր թեկնածու ընդունվի այն
յերիտասարդությունը, վորն արդեն լավ դիտե կոմ-
յերիտմիության ծրագիրն ու կանոնադրությունը:

Միևնույն ժամանակ անհրաժեշտ է վճռականապես
մերժել այն առաջարկը, վոր թեկնածու պետք է ըն-
դունել բոլոր ցանկացողներին: Ինչպես հասկանալ
կանոնադրության թեկնածուական ստաժ սահմանելու
վերաբերյալ կետը: Թեկնածու յե ընդունվում նույն-
պես ստուգված, խորհրդային իշխանությանը նվիրված
յերիտասարդությունը, բայց վորը դեռևս բավակա-
նաչափ պատրաստված չե միության անդամ ընդուն-
վելու համար: Կանոնադրությունը պարզապես ասում
է, վոր թեկնածուական ստաժը սահմանվում է նրա
համար, վորպեսզի կոմյերիտմիության մեջ մտնել
ցանկացողը պատրաստվի դրան, ծանոթանա Համ.
ԼԿՑԵՄ ծրագրին և կանոնադրությանը և վերացնի իր
քաղաքական անգրագիտությունը:

Իհարկե, առաջավոր և նվիրված յերիտասարդու-
թյան ավելի լայն ընդունելությունը կոմյերիտմիութ-
յան մեջ բնավ չի նշանակում հախուժ մոտեցում
ունենալ դեպի ընդունելության խնդիրը, անխտիր
ընդունել բոլորին, ՀամԼԿՑԵՄ ընդունվել ցանկացող
ամեն մեկին: Փորձը ցույց է տալիս, վոր այնտեղ,

վորտեղ աշալիսի սխալ ե թույլ տրվել, մենք չառանձնապես հետևանքներ ենք ստացել: Իվերլո, յերբեմն կոմյերիտմիության մեջ ընկել են պատահական և նույնիսկ թշնամական տարրեր, ամեն տեսակ ժողովներ ու աֆերիստներ: Ընկերներ, հարկավոր ե վերացնել այն դրուժյունը, յերբ շրջկոմների ու քաղկոմների բյուրոները փոխանակ հաստատելու յուրաքանչյուր մտնողի, «կույտով» են հաստատում ընդունիչ հանձնաժողովների առաջարկները: Հարկավոր ե վերացնել կոմյերիտմիության մեջ ընդունելության կանոնադրական կանոնների բոլոր խախտումները: »

ՀամԿՅԵՄ Կենտրոնական կոմիտեն առաջարկ ե մտցնում համադրումար կոմյերիտմիության մեջ ընդունելու 15-ից մինչև 26 տարեկան յերիտասարդությանը: Ինչո՞ւ, ընկերներ, սկսած 15 տարեկանից: Ձե՞՞ք վոր առաջ կոմյերիտմիության մեջ կարող եր մտնել նաև 14 տարեկան անչափահասը: Սա դարձյալ կապված ե դրության փոփոխության հետ: Առաջ արտադրության մեջ և ֆաբրիքոժուսի դպրոցներն եյին մտնում մշտապես 14 տարեկան յերիտասարդները: Մենք, իհարկե, այն ժամանակ չէյինք կարող արտադրության մեջ կամ ֆաբրիքոժուսում գտնվող այս յերիտասարդությանը չհամարմբել Լենինյան կոմյերիտմիության շարքերում: Այժմ այդ ժամանակն անցել ե: Յերիտասարդությունը ֆաբրիքոժուսի դպրոցներն ե ընդունվում միայն սկսած 15 տարեկան հասակից, արտադրության մեջ 14 տարեկան յերիտասարդներ համարյա

թե չկան: Սրա հետ միասին աճել և ամրացել ե պիոներական կազմակերպությունը, վոր լիովին կարող ե բավարարել մինչև 15 տարեկան յերեխաների ու անչափահասների պահանջները:

Ինչո՞ւ մինչև 26 տարեկանը: Վորովհետև կուսակցության մեջ, ինչպես այս բղխում ե ՀամԿ(բ) Կենտկոմի դեկտեմբերյան պլենումի վորոշումներից, պետք ե ընդունվեն իրոք առաջալոր, քաղաքականապես հասուն, արժանավոր, մեր Խորհրդային յերկրի լավագույն մարդիկ: Հարկավոր ե, վոր 23 տարեկանից բարձր յերիտասարդությունը հնարավորություն ունենա գտնվելու կոմյերիտմիության մեջ, ոգտվելով բոլոր իրավունքներից, ունենալով կոմունիստական յերիտասարդության միության անդամների բոլոր պարտականությունները: Կոմյերիտմիությունը լիակատար չափով կարող ե բավարարել այս յերիտասարդության պահանջները: Պատահական չե, վոր կոմյերիտմիության շարքերում այժմ 30%-ից ավելին 23 տարեկանից բարձր հասակ ունի: Չնայած հին կանոնադրությամբ այս յերիտասարդության իրավունքների ձևական սահմանափակումներին, նա ցանկացավ շարունակել աշխատանքը միության շարքերում: Յե՛կ մենք չենք կարող սրա հետ հաշիի չնստել:

Կանոնադրության նախագիծը քննելիս մի քանի ընկերներ ավելի առաջ գնացին. նրանք առաջարկում եյին կոմյերիտմիության մեջ ընդունել նույնիսկ 28—30 տարեկաններին: Այս առաջարկները պետք ե համարել

չմտածված: Համաձայնվեցեք, վոր մի վորևե հառա-
հային սահման պետք է լինի յերիտասարդական միու-
թյան մեջ մտնելու համար: Մենք չենք կարող լինել
մի կազմակերպութիւն, վորն իր շարքերում միավոր-
ւում է թե՛ տասնհինգ տարեկաններին և թե՛ յերեսուն
տարեկաններին, վորոնց հասակային պահանջները խո-
յապես տարբեր են:

IV. ԿԱԶՄԱԿԵՐՊԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԹԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՅԵՎ ԿԱԶՄԱԿԵՐՊԱԿԱՆ ՂԵԿԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Այսպիսով, խորհրդային առաջավոր յերիտասար-
դության բոլոր միջնախավերին ասիւլի լայն կերպով
ՀամԼԿՅԵՄ շարքերն ընդունելու հեռանկարներ են
բացվում: Այս հանգամանքն ամբողջ համառությամբ
պահանջում է վերացնել կազմակերպական աշխատան-
քի հետ մնալը: ՀամԿ(բ)Կ Կենտկոմի քարտուղար ընկ.
Ա. Ա. Անդրեյեֆն իր յեւույթում միանգամայն իրավա-
ցիորեն խիստ քննադատութեան յենթարկեց կոմյերիտ-
միութեան ամբողջ կազմակերպական աշխատանքի թե-
րութեանները: Ընկ. Անդրեյեֆի յեւույթը շատ բան է
սովորեցնում մեզ, և մենք նրանից յեղրակացութիւն
պիտի անենք մինչև վերջ: Մեր կազմակերպական աշ-
խատանքի թուլութիւնը, իսկ յերբեմն եւ անդորու-
թիւնը կարելի յէ հատարելու ամեն քայլափոխում:

Ահա, որինակ, կոմյերիտականների ու յերիտա-

սարդութեան քաղաքական կրթութիւնը: Մեր կազմա-
կերպական աշխատանքի թուլութեան հետևանքով հա-
ճախ քաղաքացիներն ու խմբակները համալրելիս թույ-
լատրվել են խափանումներ և խեղաթյուրումներ:
Պրոպագանդիստների մեջ յեղել են թվով շատ չպատ-
րաստված մարդիկ: Պրոպագանդիստներին բազմաթիւ
կազմակերպութիւններում ցույց են տալիս միանգա-
մայն անպետք դեկավարութիւն:

Յեւ կամ վերցրեք տեխնիկական կրթութեան հար-
ցը: Ի՞նչպես են լուծել այդ միջանի մարդկոմներ ու
յերկրկոմներ: Որինակ, Կուրսկի մարզկոմը, քննարկե-
լով ընկ. Կոսարեվի հեռագիրը ստախանովականների
տեխնիկական կրթութիւնը կազմակերպելու մասին,
վորոչեց. «Պարտավորեցնել մարդի կոմյերիտմիութեան
բոլոր սկզբնական կազմակերպութիւններին անհապաղ
ձեռնարկելու Կենտրոնական կոմիտեյի այս դիրեկտիվի
կատարմանը»: Յեւ ուրիշ վոչինչ: Ընկերները նեղու-
թիւն չեն կրել մտածելու, թե իսկ ո՞վ է ծրագիր
մշակելու, ո՞վ է ոգնելու տնտեսավարներին դասըն-
թացներ կազմակերպելու: Նրանք մոռացել են նաև
մի ամբողջ շարք ուրիշ հարցեր, առանց վորոնց ան-
կարելի յէ ուսման իսկական կազմակերպումը:

Յեւ կամ վերցրեք ոտար լեզուներ ուսումնասիրե-
լու հարցը: Մինչև այն ժամանակ, քանի դեռ ընկ.
Կոսարեվը կոմյերիտմիութեան Կենտրոնական կոմիտե-
յի անունից հատուկ նամակով չէր դիմել ոտար լե-
զուներ իմացողներին, շատ և շատ կազմակերպու-

թյուններ դանդաղում էին, թե դասատուների կալ-
րեր չկան: Սրանով արդարացվում էին կոմյերիտա-
կանների ու յերիտասարդության կողմից ուսուր լեզու-
ներ ուսումնասիրելու գործի բոլոր թերությունները:
Յես պետք է ասեմ, վոր միության վորոչ կազմակեր-
պություններում կազմակերպական աշխատանքի թու-
լությունը հանգել է շատ վողբալի հետևանքների:
